Հավելված
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
2022 թվականի նոյեմբերի 15-ի N 6-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում (այսուհետ՝ Պաշտպանի աշխատակազմ) պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ պաշտոն զբաղեցնող անձինք) վարքագծի կանոնները (այսուհետ՝ Կանոններ) «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող նորմեր են, որոնք կարգավորում են պաշտոն զբաղեցնող անձի բարեվարք գործելակերպը ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում և դրանից դուրս:

2. Կանոններն ունեն պարտադիր և խրախուսելի բաղադրիչներ:

3. Կանոնների պարտադիր բաղադրիչը (այսուհետ՝ Պարտադիր կանոններ) որոշակի վարքագիծ սահմանող պարտադիր նորմերի համախումբ է: Պարտադիր կանոններին չհետևելու համար պաշտոն զբաղեցնող անձը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Կանոնների խրախուսելի բաղադրիչը (այսուհետ՝ Խրախուսելի կանոններ) օրինակելի չափանիշների համախումբ է, որը պարտադիր նվազագույնից ավելին է և բնորոշում է գերազանցությունը հանրային ծառայության համակարգում: Խրախուսելի կանոններին չհետևելու համար պաշտոն զբաղեցնող անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել:

5. Կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

6. Սույն հավելվածում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **պաշտոն զբաղեցնող անձ՝** Պաշտպանի աշխատակազմում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձ, քաղաքացիական ծառայող, ինչպես նաև Պաշտպանի ներգրաված փորձագետ, մասնագետ կամ պայմանագրային հիմունքներով առանձին խնդիրներ ու գործառույթներ իրականացնող անձ՝ բացառությամբ կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների.

2) **ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ՝** Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարները, գլխավոր քարտուղարը, կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողը, մարզային և Պաշտպանի որոշմամբ ստեղծված այլ ստորաբաժանումների ղեկավարները.

3) **նվեր՝** Օրենքի իմաստով նվեր հանդիսացող գույքային առավելություն.

4) **շահերի բախում՝** իրավիճակ, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր անձնական շահով կամ Օրենքի իմաստով՝ իր հետ փոխկապակցված անձի շահով առաջնորդվել.

5) **հանրային շահ՝** սահմանադրական արժեք, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել: Շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը:

6) **ոտնձգություն՝** խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ կամ այլ եղանակով դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի նվաստացնելու անձի արժանապատվությունը՝ ճնշող, թշնամական, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելով, կամ հանգեցնում է դրան.

7) **հանրային ռեսուրսներ՝** ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցներ, մարդկային ռեսուրսներ, աշխատաժամանակ:

7. Պաշտոն զբաղեցնող անձը կարող է Կանոնների առնչությամբ մասնագիտական խորհրդատվության համար դիմել Պաշտպանի աշխատակազմի բարեվարքության հարցերով կազմակերպչին, քարտուղարության վերահսկողական

և անձնակազմի կառավարման բաժին կամ օրենքով սահմանված դեպքերում՝ խորհրդատվություն տրամադրելու իրավասություն ունեցող այլ անձի, պետական մարմնի կամ ստորաբաժանման:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ

8. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվել հանրությանը ծառայելու գիտակցումով և մարդու իրավունքների և ազատությունների պահպանման ու խթանման, խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման շահերով:

9. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է գործել իրավունքի գերակայության սկզբունքին համապատասխան, հարգել և պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները, օրենքները և այլ իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը:

10. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը խրախուսում է անօրինականությունը կամ դրա նկատմամբ հանդուրժողականությունը կամ օրինական վարքագծի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը:

11. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հաղորդակցության բոլոր միջոցներն օգտագործելիս կամ ի պաշտոնե հարցազրույց տալիս չկատարել այնպիսի հայտարարություններ կամ մեկնաբանություններ, որոնք ողջամտորեն կարող են ընկալվել որպես Պաշտպանի կամ Պաշտպանի աշխատակազմի կողմից դատական վարույթին կամ կոնկրետ գործով դատավորի լիազորությունների իրականացմանը միջամտություն:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

12. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է առավելագույն ջանասիրությամբ ծառայել հանրությանը, հանրային շահին ու մարդու իրավունքների և

ազատությունների պաշտպանության նպատակին, նվիրվածությամբ իրականացնել իր լիազորությունները:

13. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր լիազորությունների իրականացման ընթացքում ապահովել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը, չստորադասել հանրային շահն անձնական կամ խմբային մասնավոր շահերին և իր լիազորություններն իրականացնել բացառապես օրենքով սահմանված կարգով և նպատակներով:

14. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չօգտագործել զբաղեցրած պաշտոնն իր, այլ անձանց կամ մասնավոր կազմակերպությունների համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար:

15. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում աջակցել Պաշտպանին դիմում կամ բողոք ներկայացրած, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի հետ այլ կերպ հարաբերվող անձանց՝ իրացնելու իրենց այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով:

16. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական կամ պայմանագրային պարտականություններն իրականացնելիս կիրառել Պաշտպանի կամ այլ իրավասու մարմինների կողմից ընդունված և Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվող կամ Պաշտպանի աշխատակազմին առնչվող քաղաքականությունները, որոշումները և կազմակերպաիրավական բնույթի այլ ակտերը՝ անկախ անձնական համոզմունքներից և մոտեցումներից, ինչպես նաև ենթարկվել վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի օրինական պահանջներին:

17. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է անհրաժեշտության դեպքում մասնագիտական առարկություններ և առաջարկություններ ներկայացնել Պաշտպանի աշխատակազմի կողմից կատարման ենթակա կամ Պաշտպանի աշխատակազմին առնչվող քաղաքականությունների, որոշումների և կազմակերպաիրավական բնույթի այլ ակտերի վերաբերյալ՝ նախքան դրանց ընդունումը, իսկ դրանց ընդունումից հետո՝ կատարել դրանց պահանջները՝

բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ակնհայտորեն ուղղված չեն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կամ հանրային շահի պաշտպանության կամ Պաշտպանի աշխատակազմի իրավունքների կամ գործառույթների իրականացման ապահովմանը:

18. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն՝ բացառությամբ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

19. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հանրային իշխանության այլ մարմինների հետ փոխգործակցության կամ համագործակցության ընթացքում գործել թափանցիկ, ինչպես նաև պատշաճ կերպով արձագանքել առաջացած խնդիրներին:

20. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է բացառել չճշտված և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների տրամադրումը, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանցից կամ հանրային ծառայողներից չպահանջել նման տեղեկությունների տրամադրում, տեղեկություններ պահանջել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված կարգով և տրամադրել փաստերի ստուգման վրա հիմնված տեղեկություններ:

21. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում և կարգով ապահովել հանրության մասնակցությունը որոշումների կայացման հարցում:

22. Պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է խուսափել շահերի բախման հանգեցնող գործողություններից:

23. Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հայտարարություն ներկայացնել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին: Նախքան վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի գրավոր

հանձնարարություն կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից առաջարկություն ստանալը՝ պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ հարցի վերաբերյալ որևէ գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց:

24. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր լիազորությունները կատարելիս խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում կամ որոնց առկայության պայմաններում պաշտոն զբաղեցնող անձը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պարտականությունները:

25. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է խուսափել այնպիսի գործառույթներ ստանձնելուց, որոնց իրականացման ընթացքում կանխատեսելի կլինեն հաճախակի շահերի բախման իրավիճակներ:

26. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ Օրենքի իմաստով ոչ թույլատրելի նվեր ընդունելուց կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալուց:

27. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ ոչ նյութական առավելություն ընդունելուց, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ դա կարող է ազդել իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա: Ոչ նյութական առավելություն կարող է լինել, օրինակ, արտոնյալ դիրքը կամ բարիքներից արագ օգտվելու հնարավորությունը, ինչի դեպքում դրանց դրամական արժեքն ակնհայտ չէ:

28. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է բոլոր դեպքերում, բացառությամբ Օրենքի իմաստով թույլատրելի նվերների, վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացած նվերի կամ ոչ նյութական առավելության մասին:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ

29. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) և պետական լեզուն, ինչպես նաև պետական մարմինների՝ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված խորհրդանիշներն ու տարբերանշանները:

30. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և հասարակության բոլոր անդամների արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները:

31. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ հանրային ծառայությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, հանրային ծառայության կամ Պաշտպանի աշխատակազմի նկատմամբ հանրային վստահությունը նվազեցնող կամ պաշտոն զբաղեցնող անձի անկողմնակալության, անաչառության կամ անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց:

32. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Պաշտպանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ քննադատական մտահոգություններ արտահայտելիս լինել հարգալից և զուսպ:

33. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել պաշտոն զբաղեցնող անձի աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն իրականացնելու փաստը:

34. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական կամ պայմանագրային պարտականությունները կատարելիս՝ այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս ներկայանալ՝ հայտնելով անունը, ազգանունը և այն մարմինը, որը ներկայացնում է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

35. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հաղորդակցության բոլոր միջոցներն օգտագործելիս ցուցաբերել զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն:

36. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում:

37. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել գործընկերների կարծիքը և նրանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

38. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չխոչընդոտել այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողների աշխատանքային

պարտականությունների կատարմանը: Սույն կետի իմաստով խոչընդոտում չի կարող համարվել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածով և 28-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկություններ չփոխանցելը կամ չհրապարակելը:

39. Պաշտոն զբաղեցնող անձը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն, ներառյալ՝ չներկայացնել բռնություն գործադրելու սպառնալիք:

40. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ոգելից խմիչքի, թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ազդեցության տակ չկատարել ծառայողական կամ պայմանագրային պարտականությունները և չգտնվել աշխատավայրում՝ բացառությամբ բժշկի նշանակմամբ թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ օգտագործելու դեպքում: Ծառայողական կամ պայմանագրային պարտականությունները կատարելիս ոգելից խմիչքի օգտագործումը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ պաշտոնական միջոցառումների ընթացքում, որոնց ժամանակ ոգելից խմիչքի օգտագործումն ակնկալելի է: Այս դեպքում պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ոգելից խմիչք օգտագործելիս դրսևորել զսպվածություն, զերծ մնալ ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարումը կամ Պաշտպանի աշխատակազմի հեղինակությունը խաթարող վարքագծից:

41. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չծխել աշխատավայրում կամ ծառայողական կամ պայմանագրային պարտականություններն իրականացնելիս՝ բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների, ինչպես նաև պահպանել հրդեհային անվտանգության և սանիտարական, սանիտարահամաճարակային նորմերն ու կանոնները:

42. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ ոտնձգության ցանկացած դրսևորումից, այդ թվում՝ սեռական ոտնձգությունից:

43. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ Պաշտպանի աշխատակազմում ոտնձգության, ներառյալ՝ սեռական ոտնձգության, ինչպես նաև Կանոնների այլ խախտման կամ կոռուպցիոն բնույթի դեպքերի մասին հաղորդած անձի նկատմամբ այդ հիմքով նվազ բարենպաստ, ոչ հարգալից կամ ոչ բարեկիրթ վերաբերմունք դրսևորելուց:

44. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հաղորդակցության բոլոր միջոցներն օգտագործելիս և ի պաշտոնե հարցազրույց տալիս պահպանել Պաշտպանի պաշտոնական դիրքորոշումը, հաղորդել փաստերի վրա հիմնված ու ճշգրտված արժանահավատ տեղեկություններ:

45. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել հանրության իրազեկմանն ուղղված՝ զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում աջակցել նրանց սահմանված կարգով հավաստի տեղեկություններ ստանալու հարցում:

46. Պաշտպանի աշխատակազմում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը կամ քաղաքացիական ծառայողը պարտավոր է սոցիալական ցանցերում չկատարել որևէ գրառում կամ մեկնաբանություն, չհավանել կամ չտարածել գրառումներ, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել Պաշտպանի կամ Պաշտպանի աշխատակազմի հեղինակությունը, այդ թվում՝ չկատարել այնպիսի գրառում կամ մեկնաբանություն կամ չհավանել կամ չտարածել գրառումներ, որոնք կարող են արժեզրկել կամ արատավորել Պաշտպանի կամ Պաշտպանի աշխատակազմի գործունեությունը:

47. Սոցիալական ցանցերում անձնական գրառումներ կատարելիս Պաշտպանի աշխատակազմում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը կամ քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար, որ նման գրառումներն ընկալվեն որպես սեփական կարծիքի արտահայտում և ոչ որպես Պաշտպանի աշխատակազմի պաշտոնական դիրքորոշման ներկայացում:

48. Պաշտպանի աշխատակազմում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը կամ քաղաքացիական ծառայողը պարտավոր է սոցիալական ցանցերում չքննադատել Պաշտպանի և Պաշտպանի աշխատակազմի գործառույթները, որոշումները, գործունեությանն առնչվող խնդիրները և իրավական հարցերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է ի պաշտոնե իրականացվող գործառույթներից, ինչպես նաև դրանց վերաբերյալ չտարածել ոչ պաշտոնական լուրեր:

ԲԱԺԻՆ 5. ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ

49. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն կատարել իր ծառայողական կամ պայմանագրային պարտականությունները: Նա պարտավոր է չհրաժարվել դրանց կատարումից՝ բացառությամբ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

50. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պարտականությունները կատարել օրենքով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի կողմից սահմանված ժամկետում, իսկ նման ժամկետի բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում:

51. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում զերծ մնալ Պաշտպանին դիմում կամ բողոք ներկայացրած, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի հետ այլ կերպ հարաբերվող անձանց Պաշտպանի լիազորություններից չբխող խոստումներ տալուց:

52. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է պահպանել ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ օրենքով պաշտպանվող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

53. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել (այդ թվում՝ պաշտոնից ազատվելուց հետո) ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, իսկ նման տեղեկությունները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքում՝ անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր վերադաս անձին, անմիջական ղեկավարին կամ գաղտնի տեղեկությունների պահպանությունն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին:

54. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է պատշաճ կերպով և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության և անվտանգության կանոնները պահպանելով՝ մշակել և տնօրինել ծառայողական կամ պայմանագրային

պարտականությունների իրականացմամբ պայմանավորված իր տնօրինության տակ հայտնված տվյալները, տեղեկությունները, գաղտնաբառերը և այլն:

55. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնպահ մնալ իր լիազորությունների կատարման հետ չառնչվող պետական կամ ծառայողական գաղտնիքի տեղեկակիրներին, տեղեկություններին, գաղտնաբառերին կամ հատուկ պահպանվող տարածքներին հասանելիություն ստանալուն ուղղված քայլերի ձեռնարկումից, ինչպես նաև առանց թույլտվության դրանց տեղեկակիրների պատճենահանումից, ձայնագրումից, լուսանկարումից կամ տեսագրումից:

56. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր ծառայողական կամ պայմանագրային պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում չօգտագործել իր պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած այնպիսի տեղեկություններ, որոնք, թեև ենթակա են հրապարակման, սակայն դեռևս չեն հրապարակվել Պաշտպանի աշխատակազմի կողմից:

57. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնպահ մնալ ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած տեղեկատվությունն անձնական օգուտ կամ առավելություն ստանալու նպատակով օգտագործելուց:

58. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ Պաշտպանին դիմում կամ բողոք ներկայացրած անձին կոնկրետ փաստաբանի մոտ կամ փաստաբանական գրասենյակ ուղղորդելուց, բացառությամբ հանրային պաշտպանի գրասենյակի:

59. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չհրապարակել օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացության տվյալները, հարցազրույցների ընթացքում դրա հետ կապված հարցադրումները կատարել՝ առանց ուղղակիորեն հղում կատարելու եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

60. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր գործունեության համար տրամադրված հանրային ռեսուրսները և այլ գույքն օգտագործել միայն ծառայողական նպատակներով, արդյունավետ և խնայողաբար:

61. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հանրային ռեսուրսները, այդ թվում՝ այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների աշխատաժամանակը, չօգտագործել սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

62. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի հետ:

ԲԱԺԻՆ 6. ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

63. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, գործել այնպես, որ իր անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի կամ ողջամտորեն այդպիսի տպավորություն չստեղծի, չառաջնորդվել ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով, նախապաշարմունքներով և կողմնակի ազդեցությամբ:

64. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է բացառել խտրական վերաբերմունքի դրսևորումը որևէ անձի, անձանց խմբի կամ կազմակերպության նկատմամբ՝ կապված նրա սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, ինչպես նաև չխրախուսել կամ հանդուրժողականություն չդրսևորել այլ անձանց կողմից խտրական վերաբերմունքի դրսևորման կամ կարծրատիպային, վիրավորական, ծաղրող կամ անձին կամ անձանց խմբին խարանավորող կամ թիրախավորող արտահայտությունների և եզրույթների օգտագործման նկատմամբ:

65. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է բացառել նաև խտրական վերաբերմունքի դրսևորումը այն անձի, անձանց խմբի կամ կազմակերպության նկատմամբ, որը թեև օժտված չէ սույն հավելվածի 64-րդ կետով սահմանված

հատկանիշներով, սակայն ազգակցական, ամուսնական կամ այլ կապ ունի կամ այլ կերպ փոխկապակցված է նման հատկանիշ ունեցող անձի, անձանց խմբի կամ կազմակերպության հետ:

66. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս զգայունություն ցուցաբերել հասարակության բոլոր անդամների, հատկապես՝ խոցելի խմբերի կարիքների նկատմամբ: Բռնության, ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ հաղորդակցության ընթացքում պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է խուսափել անձին լրացուցիչ հոգեկան տառապանքներ պատճառող վարքագծի դրսևորումից:

67. Իր լիազորությունների իրականացման ընթացքում, այդ թվում՝ ի պաշտոնե հաղորդակցության բոլոր միջոցներն օգտագործելիս պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է օգտագործել չեզոք և անձի տարիքին համապատասխան բառապաշար և մոտեցում, հաշվի առնել անձի զարգացող հնարավորությունների առանձնահատկությունները, զերծ մնալ կարծրատիպային, վիրավորական, ծաղրող, նվաստացուցիչ կամ խղճահարություն առաջացնող կամ ընդգծված դրական վերաբերմունք արտահայտող կամ անձին կամ անձանց խմբին խարանավորող կամ թիրախավորող արտահայտությունների և եզրույթների օգտագործումից:

68. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր գործընկերների հետ հարաբերվելիս՝ մասնագիտական աջակցության, կարողությունների զարգացման, կատարողականի գնահատման, առաջխաղացման և աշխատանքային հարաբերություններից բխող այլ գործողություններում, ցուցաբերել հավասար վերաբերմունք:

69. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված հանրային ծառայության համակարգում այդ անձի ունեցած պաշտոնով:

70. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ ի պաշտոնե հանդես գալիս հրապարակայնորեն չարտահայտել իր քաղաքական տեսակետները:

71. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության

(կուսակցությունների դաշինքի), քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որը, ի թիվս այլնի, ներառում է Պաշտպանի աշխատակազմի տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցության (կուսակցությունների դաշինքին), դրա անդամին կամ թեկնածուին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ ցուցադրելը, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմում որևէ թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ քարոզ իրականացնելը:

72. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չգործել ի շահ կուսակցության (կուսակցությունների դաշինքի), դրա անդամի կամ թեկնածուի, չներգրավվել քաղաքական շահի պաշտպանության մեջ, չկատարել նման գործունեության համար հանրային միջոցներ տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների:

73. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է քաղաքական գործունեություն իրականացնելիս, ներառյալ՝ քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչությանը մասնակցելիս չնշել իր պաշտոնը, կոչումը կամ որևէ այլ կերպ չօգտագործել պաշտոնի, Պաշտպանի աշխատակազմի կամ հանրային ծառայության հեղինակությունը, ինչպես նաև չօգտագործել այդ հեղինակությունն ի շահ որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի), թեկնածուի կամ քարոզչության կողմի օգտին:

ԲԱԺԻՆ 7. ԿԱՆՈՆՆԵՐ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

74. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հստակորեն տիրապետել Պաշտպանի աշխատակազմի և համապատասխան ստորաբաժանման գործունեության նպատակներին, քաղաքականություններին և գործառույթներին, դրանց մասին պատշաճ տեղեկացնել իրեն ենթակա պաշտոն զբաղեցնող անձանց:

75. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իրեն ենթակա պաշտոն զբաղեցնող անձանց պատշաճ տեղեկացնել Կանոնների և հանրային ծառայության սկզբունքների մասին:

76. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է, անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով բարեվարքության հարցերով կազմակերպչի կամ էթիկայի հանձնաժողովի հետ, պատասխանել Կանոնների պատշաճ իրագործման վերաբերյալ իրեն ենթակա պաշտոն զբաղեցնող անձի հարցերին:

77. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում իրեն վերապահված լիազորությունների շրջանակում պաշտպանել իրեն ենթակա պաշտոն զբաղեցնող անձանց և այլ աշխատակիցների օրինական շահերը՝ միջամտելով նրանց հանդեպ ոտնձգության կամ այլ հակաիրավական վերաբերմունքի ցանկացած դրսևորման դեպքում:

78. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է աշխատանքային հարաբերություններում բացառել իր կողմից խտրական վարքագծի դրսևորումը, ինչպես նաև վերադասության լիազորության չարաշահումը:

79. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձին արգելվում է տալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին հակասող, ինչպես նաև իր կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս հանձնարարականներ:

80. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իրեն ենթակա պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Ազդարարման համակարգի մասին» օրենքի իմաստով կոռուպցիոն բնույթի դեպքերի կամ վնասակար գործողությունների վերաբերյալ հաղորդումներ ստանալու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով քայլեր ձեռնարկել՝ դրանց առնչությամբ հետագա գործողությունների ընթացքն ապահովելու համար:

ԲԱԺԻՆ 8. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

81. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցել Պաշտպանի իրավասություններից բխող մշտադիտարկման այցերին:

82. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է մշտադիտարկումն իրականացնել բացառապես այցերի պլանավորման փուլում հաստատված խմբի

կազմում, եթե կոնկրետ անհրաժեշտությամբ պայմանավորված այլ բան չի հանձնարարվել այցը համակարգողի կողմից:

83. Մշտադիտարկում իրականացնող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է մշտադիտարկվող հիմնարկի կամ հաստատության վարչակազմին, ինչպես նաև այնտեղ գտնվող անձանց ներկայացնել այցի նպատակը և շրջանակը, ինչպես նաև մշտադիտարկում իրականացնող պաշտոն զբաղեցնող անձանց լիազորությունները:

84. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ մշտադիտարկման ընթացքում և դրա շրջանակներում արձանագրվող խնդիրների լուծման, ինչպես նաև այլ անձանց հետ հաղորդակցվելիս վերջիններիս բարձրացրած հարցերի լուծման կապակցությամբ որևէ խոստում տալուց: Նման դեպքերում պաշտոն զբաղեցնող անձը պետք է միայն ներկայացնի Պաշտպանի լիազորությունների շրջանակը և այն միջոցներն ու գործողությունները, որոնք կձեռնարկվեն Պաշտպանի լիազորությունների շրջանակում կոնկրետ խնդրի հնարավոր լուծման ուղղությամբ:

85. Մշտադիտարկում իրականացնող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է առաջնորդվել չվնասելու, անկողմնակալության, սպասելիքների կառավարման, համոզիչ լինելու սկզբունքներով:

86. Պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լսել մշտադիտարկվող հաստատության կամ հիմնարկի աշխատակիցներին և հիմնարկում կամ հաստատությունում գտնվող այլ անձանց, ապահովել նրանց՝ տեղեկություններ հայտնելու, իրենց կարծիքն արտահայտելու և առարկություններ ներկայացնելու իրավունքների իրացման համար բավարար պայմաններ և հնարավորություններ:

87. Մշտադիտարկում իրականացնող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է երաշխավորել մշտադիտարկվող հիմնարկում կամ հաստատությունում գտնվող անձանց հետ առանձնազրույցների գաղտնիությունը: Այն դեպքում, երբ տեղեկությունների բացահայտումը բխում է մշտադիտարկման նպատակներից, պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ապահովել անձնական տվյալների, ինչպես նաև անձի ինքնությունը ցանկացած այլ կերպ բացահայտող տեղեկատվության գաղտնիությունը: Այն դեպքերում, երբ նման տեղեկատվության բացահայտումն անհրաժեշտ է անձի իրավունքների պաշտպանության նկատառումներով, ապա այն կարող է բացահայտվել բացառապես անձի նախնական և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնությունն ստանալուց հետո:

88. Մշտադիտարկում իրականացնող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է դրսևորել հետևողականություն, համբերատարություն և զգոնություն և բազմակողմանի ստուգել հավաքագրված տեղեկատվության հավաստիությունը:

89. Մշտադիտարկում իրականացնող պաշտոն զբաղեցնող անձը ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելիս պարտավոր է ապահովել գործողությունների իրականացման թափանցիկություն և պահպանել մասնագիտական էթիկայի կանոնները:

90. Մշտադիտարկման ընթացքում պաշտոն զբաղեցնող անձն առաջնորդվում է նաև Պաշտպանի գործառույթներին վերաբերելի՝ Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների դեմ կոմիտեի, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի, Երեխաների իրավունքների կոմիտեի, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խմբի և Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագիտական խմբի սահմանած միջազգային չափորոշիչներով և մեթոդաբանությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի մայիսի 6-ի թիվ 494-Ա և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մայիսի 18-ի թիվ 498-Ա համատեղ հրամանի դրույթներով:

91. Մշտադիտարկման ընթացքում արգելվում է մշտադիտարկվող հաստատության կամ հիմնարկի տնօրինության կամ աշխատակցի կողմից հյուրասիրություն ընդունելը, բացառությամբ ջրի, ինչպես նաև վերջիններիս հետ անձնական բնույթի կամ այլ ոչ գործնական հարցերի քննարկմանը մասնակցելը:

92. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ջանքեր գործադրել մշտադիտարկման այցերի ընթացքում աշխատակիցների անվտանգության ապահովման, նրանց աշխատանքների խոչընդոտների վերացման և մշտադիտարկման արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

ԲԱԺԻՆ 9. ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐ

93. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է իր աշխատանքի որակը բարձրացնելու նպատակով բաց լինի նորարարական գործելակերպերի նկատմամբ, շարունակաբար դիտարկի իր ոլորտին վերաբերելի ազգային ու միջազգային լավ գործելակերպերը, հետևի միջազգային և տարածաշրջանային զարգացումներին, ինչպես նաև փորձի դրանք ներմուծել իր աշխատանքում՝ որպես կիրառման ենթակա հնարավոր պրակտիկա:

94. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է անհրաժեշտության դեպքում աջակցություն ցուցաբերի գործընկերներին, հատկապես՝ նորանշանակ պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրենց ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում:

95. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է անհրաժեշտության դեպքում գործընկերներին ներգրավի իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացում, նրանց թույլ տա արտահայտել այդ որոշումների վերաբերյալ իրենց կարծիքը, իսկ դրանց չհամաձայնելու դեպքում՝ հայտնի պատճառները:

96. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խրախուսի կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների մասին հաղորդում ներկայացնելը և նման վարքագծով օրինակ ծառայի մյուս հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար:

97. Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պետք է քայլեր ձեռնարկի իրեն ենթակա պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կոռուպցիոն ռիսկեր պարունակող վարքագիծ թույլ չտալու նպատակով:

98. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է ստեղծի աշխատանքային բարոյահոգեբանական բարենպաստ և առողջ միջավայր, որը կնպաստի ավելի արդյունավետ աշխատանքի իրականացմանը:

99. Պաշտոն զբաղեցնող անձն այլ պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի հետ մասնավոր ֆինանսական գործարքներ կնքելու դեպքում պետք է հավաստիանա և ապահովի, որ իրենց մասնավոր գործարքների արդյունքում հանրային ծառայության հեղինակությունը և Պաշտպանի աշխատակազմի և մասնավոր գործարքի մյուս կողմի աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնի աշխատանքները որևէ գործառնական կամ հեղինակության վնաս չկրեն:

100.Պաշտոն զբաղեցնող անձը պետք է հանրային իշխանության մարմնի հեղինակությունը պահպանելու հարցում լինի հետևողական, բացահայտի և հնարավորինս վերացնի իր կողմից թույլ տրված սխալները և բացթողումները:

101. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է իր վարքագծով նպաստի Պաշտպանի պաշտոնական հայտարարություններում արտահայտված դիրքորոշման տարածմանը կամ դրա հանրային պատշաճ ընկալմանը:

102. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին կամ իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձին կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնի «Ազդարարման համակարգի մասին» օրենքի իմաստով կոռուպցիոն բնույթի դեպքերի կամ վնասակար գործողությունների, ինչպես նաև շահերի առերևույթ բախման իրավիճակների, Կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, Օրենքով սահմանված հայտարարագրման կանոնների առերևույթ խախտման մասին:

103. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնի իր կամ իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի կողմից ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ: Իր կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ պաշտոն զբաղեցնող անձը հաղորդում է ներկայացնում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին, իսկ իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ՝ վերջիններիս վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին: